

Եփօր մօքը սպանեց, Քեռի-Թորոսը մկանց, թէ. մ'ըդի, պէտք է կարգենք, մեր թագաւորութիւնը խանգարուեր ա-արի, որդի, քէ քրիստոնէի աղջիկ առնենք. կռապաշտի աղջիկ որ ուզենք՝ մեր կրօնն զարմաբարի կը նկնի Կանացին իրանց սերունդից, իրանց աղջից մէ ախչիկ ու դին ու պահեցին Խառնիկ-Ռոբինն: Պահեցին, մէ Երկու տարի անցաւ, Խառնիկ-Ռոբինը մեռաւ:

7

Դ Է Լ Ի Ւ Ց

Խառնիկ-Ռոբինը որ մեռաւ, ընդուր կնիկն էլ էրեխտով էր մնացէ. պառիւր մէկ տղայ պերեց: Վերեցին կնքեցին, անունը դրին Խառիր: Սկսեցին Խառիթին պահել, քանի որ մէրը քրիստոնեայ էր, իրանց ազգիցն էր՝ պահում էր: Պահեցին, տղէն էլաւ. մէտաստանն կինգ տարեկան տղամած Սկսեց Քեռի-Թորոսը տղին կարդալ տալ. մը սորուաւ, նուռ էր «Տուռ Խառիթ, ին ասում Սկսեց փեշակի տոյ, թէ թօ էթայ փեշակ սորուի բալքի. ինչ փեշակի տուեց, վերցը մէկը կրօն չխանցի թէ. «Խառիթ, որ բանեց ա' արի դնա նախորդութիւն աշա, էս գեղի նախիրը պահի»:

Պէտքալ էդ գեղի նախիրը ու տարաւ պահեց: Մէ բանի օրից ետք զնաց դարբընի կուշոր, մէ լաւ մէշի¹⁾ չօժան տարաւ ընտրութիւնը կուշոր, տաւ. «Երկու փութ էրեամ ըստու կրօնը պրտի հացցունեաւ: Աև դնում էր ուսին, նախիրը տանում էր պահում էր: Ըղոնց բաղաքի դրաղն էլ մէ Խառոխ անտւնաւոր կեղ կար. ըստոնց նախիրին էլ տաւարդ պերում էր ըստու խետ արածացնում ին: Հոյ²⁾ ին խարում իրանց հըմար: Խառիթը ընդուր թամբահ էր անեմ, թէ բանը իրան օրը տաւարդ էս եանց կը պերես, որ հոյ խարանք: Մէկ օր էն Կաղալսայ նախիրին շատ ետ պերեց նախիրը՝ որ էկաւ հասաւ՝ հարցըց թէ. «զուռ ումսաղ, ընչի էսքան ետքար.» մէ յօմախ կտամ կը մահանաս»:

Թը. «Վալլահ, մեր կեղէն մէտ իշխան մարդ էր մեռէ. ասի բալքի հարիսէն հասնի, պատարագը տուս կայ, ուտեմ կամ. տեսայ, որ ետնում ա' նախիրը քշի էկայ:»

1) Անտարի: 2) Ըստ պատմութիւնի այդ խաղի էռեթիւնը հնաւ եալն է.—իւրաքանչեւը մէ փայտէ գունդ է դնում գետին և զադանակով զարկում, ով շառ հնաւացնէ գունդը՝ կը հեծնի միւսին:

Ըստու. «Դէ դու նախրին լաւ մուղաթ արա, ես էթամ ձեր կեղծ հարիսայ պերեմ»: Էլաւ Թաւիթը կնաց Կաղոխ: Հարցրեց մարդք-կեց. թէ պատարագատունը¹⁾ էրն այ նշան տուեցին Թաւիթին, Թաւիթը կնաց էտ ննջեցելի տունը: Մենք, մարդաշափ պըտուիներ դրած են թուրան վրէն, հարիսայ են էփում:

Ըստու. «Բաջի, Աստուած ննջեցելի հոգին լուսաւորի. մէ քիչ հարիսայ տուէք ուստեմ էթամ, զարիք մարդ ևմ»:

Պերեցին մէկ աման լցրեցին դիմն դէմը: Թաւիթն էր, հարանը²⁾ մըլքից յարձեց, հացը հանեց ու նստաւ ուստեղուաւ ևդ մէ ամանը կերաւ: Ըստու. «Բաջի, Աստուած հոգին լուսաւորայ, մէ աման էլ տուէք, յը կշտացայ»: Մէ աման էլ լցըն տուեցին: Կերաւ, պրծաւ, ասաւ:

«Բաջի, մէ աման էլ առուէք, յը կշտացայ»:

«Հըլսկումն ուստես. հըմէն դու կերար, բա էս պատարագի մարդիկ գան ինչ ուստեն»:

Թաւիթը առանցի խօսելու էլաւ հարանը կապեց մէջքն ու չօմախը եւաւաշ անցկացրեց հարիսի պտուկի կանթն ու դրեց յուսին. մէ աման էլ եղ կար, էն եղն էլ առաւ մեռքը ու քէլեց. «Ա ջանըն, տարաւ հարիսէն», հուարը գցեցին: Մարդիկից մէկը ասաւ. «Խասունայ ծուռ Թաւիթն ա, կը ջարոէ մեզ, գործ չունիք»: Հարիսէն վէ կելաւ էկաւ հասաւ նախըրցուն:

«Երի ընկեր, Աստուած ննջեցելի հոգին լուսաւորի, ինչքան հարիսայ ի՞ո՞ւ՝ պերեր ևմ»:

«Աստուն կը նարդի խօսու. էդ մարդը քիչ կերաւ, ես քաշուաւ. ինը ըստորոշ կերաւ, ներաւ սրբաւ ու պտուկը բերեց դրեց մի մենք քարի վրայ, իր չօմախով տուեց պտուկին, ասաւ. «Առուէք ձեր պըտուկը, Աստուած ննջեցելի հոգին լուսաւորի», կտորները կնաց: Եսով կան հօլ խաղացին Թաւիթը իր հօլը տուեց, մէ մորի պերնի էր. էնակ, ստուեց, որ հօլը կնաց. մէ ծակ կար, ընկաւ. էն ծակի մէջ: Կնաց ինչ, իլլաջ արաւ՝ տեսաւ որ խոր ա էն ծակը. էն ընդերն տսաւ. «Երի ջանըն, մէ հօլ էլ կը շիփինք»:

«Զէ, ասաւ, ես ին հօլը պըտի էս ծակից հանեմ, լիմ թողի. Ասաւ, տու նախիրը մուղաթ արաւ»: Գնաց իրան ցեղից մէ ութ-ին-տաս տղայ պերեց, մէ հաս էլ սէլի ճոպտն պերեց. որ կապէ իր թևերու տակը, մտնէ էդ ծակը Որ էկան հասան ծակի վրէն՝ ճոպանը կապեց դոլթ դատըկից ու կախեցին էդ ֆորի մէջ: Որ մտաւ լոդ ֆորի մէջը՝ գնաց հօլը գտաւ Տեսաւ որ ըստեղ մի մի կայ, հրեղէն

1) Ննջեցեալի տունը. 2) Ալխարի կաշուց շինած պարկ: որի մէջ, հացը լի բորանում արևէ տակ:

ձիւ Որ մտաւ ըստեղ՝ էդ ձինը լեզու առաւ խօսաց, թէ. «Սասանայ ծուռ, դու Լկար ընձի գըտմար, նստուած ընձի քեզիկ էր զըսմաթ արել. մէկ օրուայ մըչի ուղենամ աշխատին կը քանդեմ, ուղենամ կը շիվմ (ըստուր տէրը մեռեր էր, էդ մին ծովից էր հանէ.) ևս Փուռ-կէ-Բաղադին եմ. իմ ափրոջ թուրն էլ հւաս է, պատից կախուկ է, կ' ծկրտան թուրբա»:

Քուռիկ-Բաղադին դուս քաշեց, թուրն էլ կայեց վրբէն, հեծաւ ձինը, մէ դուս կար, պաց տրաւ եղ դուռը ու քաշեց էրաւ տղերբու կուշտ. Գաղղիսայ նախըրբին էկաւ, թէ... Ծատուած քուտունը բարի. մէ քառասուն ձիաւոր էկան նախրի կ'օր կիախն տարանեա:

«ԵՇ տրայ, դըւնջը տարանեա:

Թէ. և սալէս:

Քուռիկ-Բաղադին քշեց ու ըդոնց քամակիցը գնաց, ըդոնց նոր սրանեց գնաց ու տեսաւ, մտած են մէ զալլ. զազի դռանը կայնաւ ու ձին տուեց. «Խնաւ էկէ ր, ինչ մարդիկ էքք: Եղ մարդիկի մէկը տուս էկաւ տեսաւ, որ հւայ մէ ջանիլ տղայ ձիու վրայ նստած զաղի դուռը կարէ կայնէ. Ես դարձաւ գնաց իրանց հարամբաշուն¹⁾ ասաց, թէ. «Եյսպէս մի երիտասարդ տրայ ձիու վրայ նստէ զաղի դուռը պունէ, թէ իմ տաւարը տուէքք:»

Ըստա. «Էլէք դուս տեսնք վճռ ա, չլք ճանաշում: Էն միւսն էլ էլան տեսան, որ Սասունայ ծուռ Դաւիթն ա. էկան իրանց մեծին ասին թէ Սասունայ ծուռ Դաւիթն ա:

Ըստա. գգնացէք, Ծատրծու սիրուն. բարկութիւնը կը բռնայ, մեր քառասունին կը սրցանին. ըստոնցը տուածուրիկ է²⁾. միննաթ արէք պերէք ըստեղ, որ եօլայ էթանեք: (Տաւարի մէկը մորթեր են, ՅԵ-ք սաղ էր). Միննաթ արին, միուց վէ պերնցին, առան կնասցին զարին. Աղացիցն պաղաստեցին, թէ Ծածու սիրուն, մէ երինըը մորթեր ենք, զինը ասաց մանեթ ա, առ հարուր մանեթ, մէղք ենքք. Պերնցին հարուր մանեթ փոշ տուեցին, էն սաղ տաւարներն է ժողուց առա զնաց: Տարաւ խառնեց ուր նախրին, նախրին և քշեց տարաւ կեղը. Զէն տուեց. «Քնուիթորոս, տար մանեն մաղի տաւարը տուր իրեն, էլ ես տաւար յեմ պահում, նախրի յեմ էթաց:»

Էկան ամեն մարդ իրանց տաւարը տարան. էն մէ տաւարի ակըն է ասաւ իմ մէ տաւարը յը կայ. « ըդուս տաւար կորցրեր եմ. զին դնին, ինչ ա՝ տամա: Դշն դրին 15 մանեթ, հանեց 20 մանեթ տուեց: Էկան ուրենց ուրիշ նախըրբ բռնին:

1) Ծատրակապէս: 2) Քուռած է:

Դաւիթը սկսեց Քուռիէ. Քարաղը հեծնել ու աւ¹⁾) ու դուշ էթալը և ու զուշ էր էթում, Աստծոյ օրը կ'էթէր սարեցը կը պատէր, իրի կունը կը կար տուն։ Անա, արի որ, էն ժամանակ Դաւիթի-Արքիկը որ հաղցատայ խաղիթին որպաննեց թնառու թագաւորութիւնը վերջացրեց, Մըսրբ-Մելիքը կար, Մորայ քաղքին էր նստում. էդ Մորա Մելիքը որ Խում ա թէ հաղցատայ խաղիթը վերջացեր է, Դաւիթի-Արքիկն է մեսեր է, էկան Մովասար տիրեց։ Անա Դաւիթը որ էթում էր աւ ու զուշ անում, կայու ժամանակ մէ որբ պառաւի կորեկի արտ կար. Դաւիթի ճանապարհի վրեխն էր, Աստծո իրան օրը կայտում Քուռիէ-Քարաղին խրիում էր արտի մէջով, պալում էր տուն։ Պառաւը մէկ օր գնաց տեսաւ որ Դաւիթը կորեկն աւկրէ թուղեր աւ Ասաւ. «Դաւիթ, դու քո մուրաղին յը հասնիս. ես մի որբ օղուշաղ եմ, երեք—չորս էրեխսայ ունիյ, իմ ուռուղը էդ արտ կորեկն է. դու տէնց որ զօջաղ տղայ իս, Սասունայ սարը, Մովասար, էկի Մորա Մելիքը զաւթեր է. քեզնից առաջ մեր ազգի փակչւանները էդ Մովասար տիրեր են, էթում ենք եալաղ. ընյի չես էթում առնիս, զօյաղ տրայ ես՝ դնաց Մովասար, առ Մորա-Մելիքի մեռնից։ Ճանին զարտ էրաւ պառաւի խօսքերը Դաւիթին Կանչեց իրիկունը Քեռի-Թօրոսին հարցմունք արտ. Դաւիթը էդ բաները. Տեսաւ որ պառաւի խօսքերն ուղիղ է։ «Բնուի-Թօրոս, ասաւ, առաւտունը ողբախ ես էթամ Մովասար։

«Ո՞րդի, կը տան քէ ուղավանին, գործ չունիս։

«Հի, ասաւ, ես պըտի էթամ։

Քեռի-Թօրոս տեսաւ, որ տղէն խելքովցեր է, էս ընտոնցից դաշտ կ'ըլի, Մովասար կառնի։

Առաւուց ձինը հեծաւ ու գնաց դրայ Մովասար. Գնաց տեսաւ, որ Մորայ էլը էնպէսա ա յաղը շաղրի սէօքամնիշ արէ²⁾), որ էլ չեմ կարայ ասիս Ֆինը քեցց գնաց մէ հարուստ մարդի դռանը իջաւ։

Էկան ձինը քաշին տարան կապցին։ Թէ. «Ճեղի բնչ իրաւունք կայ, որ էկէ ըստէ շաղր էք դրէ։»

Տեսան որ Սասման Տաերուց է, մէկը էլի բամ ա էկէ³⁾։

Ասին. «Էլուրբան արեւոդ, քո անունն ինչ ա. տու ո՞ր գեղիցն ես։ Թէ. «Ես Սասունցի իմ, իմ անունն է Դաւիթ ա. էս մեր պապական տեղն ա, մեղի բնչ իրաւունք ունիք, որ դաք ըստէ իջնէք։»

Էդ մարդիկը տեսան. որ իրանց ըտէ թագաւոր յը կայ, զօշուն յը կայ. թագաւորն ու զօշունը Մըսր աւ էդ մարդի տանը, որ Դաւիթը վեր էր էկէ ըստուր մի լաւ ախշիկ ունէր, Խոանդուր-Խանում անունաւոր։ Էդ ախշիկը Մորա-Մելիքին նշան դրուած ա ըլնում։

¹⁾ Արս. ²⁾ Վըսն տուել. ³⁾ Լոյտ աշխարհ է եկել.

Խորհուրդ արեցին, թէ էս ախշիկը տալիս ենք քէ. խարենք. բարի ճամփու քցենք:

Եկան էդ մարդիկն ասեցին, թէ. «Դաւիթ, կիսուդ արևոդ դուրբան, էսի Մարա-Մելիքի տեղն ա, մենք է ընտուր ժողովուրդն ենք. եթէ մենք լիմանենք քունն է՝ չեք կայ. էս մի անգամ մեզի ներողութիւն կանես. մէկ էլ որ կանք՝ մեր էլը ջարդէ. էս աղջկն է կտանք քեզի, մէ ամիս էլ մեզի ժամանակ կը տաս, ախշկայ ձեռ ու ոտը կը տեսնենք, կը կա քո հախուն կտանես. մենք էլ կը քոյենք, էլ մենք կայ:

Պարեցին նշանադրութիւն արեցին: Եկաւ Դաւիթը իր մին ու թողից էկաւ: Քեռի-Թորոսին ասաւ, թէ. «Վալլահ, զնացեր իմ Շովասար, Մարայ էլի մէջ մի հարուստ մարդ կար, ընդդրա ախշիկը նշանադրութիւն իմ արէ. ընտունք էլ խօսք ին տուած, որ էս մէ անգամն ա էլ չկան Շովասար:

Է՛, հոդի ասաւ. գնացիր մեր կոխսը գցիր զալմաղալի տակը: Բա Եփ պըտի էթաս քո նշանածը պերես:

Հոսաւ. «Ո՛չ ամիս ժամանակ ա տուած ընձի, որ էթանք իմ նշանածն առնենք կանք»: Դու մի ասս էս էլը Դաւիթին խարին ճամփայ զցան ու քոյեցին զնացին: Ըստոնք էլ, էդ ախշիկայ հւրը, Մարա Մելիքի հապտակի տըկին էր. Այսրցի էր նփօր ամիսը թըմաւ, Դաւիթը մ. տաս միաւորով կնացին, որ ախշիկը պերին: Կնացին տեսան որ զալայ քէօզը, իւրդի բօշ (վէզիրը քոչել է, արօտավայր դատարկ է):

Քեռի-Թորոսն ասաւ. «Ո՛րդի, ես յասի քեզի, թէ խաթայ կուգայ ըստոնցից, խարած ինք: Եսո դարձան էկան Սասուն:

Դաւիթը հեծա իր Քուռկէ-Ջալարին, իրը գիւրզը, նիտը, անի զը, իր թուրը, ընկաւ ճանփէն, թէ պըտի էթամ Մարայ երկիրը, էն ախշիկը գտնեմ կամ, անհնար առ:

Մւրը, Քեռի-Թորոսը, ինչքան պաղատանք արեցին՝ իլլաջ չ'եւաւ, թէ ես պըտի էթամ:

Հեծաւ իր մինն, ու դանչեց իր Սատուածը ու գնաց:

Չատ ու ք'չ, Սատուած զինայ, ինչքան գնաց: Գնաց տեսաւ որ մէ սարի գլխի մէ ամարաթ ա երևում: Կնաց իշկից, տեսաւ որ մէ հատ ախշիկ է:

Ա՛յ արդայ, դու ինչ մարդ ես. դուշն իրա զանադովը¹⁾ օձն իր պոբտովը ըստոնքը չի երևայ. դու ինչպէստ էկար ըստեղ. դու ինչ մարդ ես:

1) Թեհերսպը:

թէ. «Ես Շառունյի Դաւիթն իմ»:

Ըստեց նստան, խօսեցին իրար այժմալ-դըսաչ¹⁾ արեցին: Դաւիթն առաւ, թէ. «Դու ուր ես էթը եմ»:

Թէ, Մարա-Մելիքի մըշին մի հատ Խառնդութ-Խաթուն անունաւոր ախշիկն իմ նշանածն ա. խարեր են առէ կնացէ. էթը եմ եռ ճարեմ պերեմ»:

«Թու, ասաւ, զու ինչքան ուժ ու զլւաթ ունիս, որ էթը ես Մարա-Մելիքի խողի մըշից ախշիկ պերես»:

Սասաւ. «Եթուում եմ հրմի. թէ Ռատուած յաջողեր է՝ կը պերիմ, թէ չէ՝ կը սրպանուեմ» (Թու մի ասս էդ ախշիկը բնչ ախշիկ է. բոտունք էլ Բարդաստայ խալքի էլիցն են: Ծրլաղ թագաւորի ժամանակին, որ զոտոնք կապում են Խովաստր լազար՝ Աբլաղը ըսու մօր խետ նստում էր կայնում, իսկ էդ ախշիկը Ծրլաղ թագաւորիցն էր: Զունքի որ Ծրլաղի սերունդիցն էր, Շատծու գութը ընկեր էր ընտուր սիրութը):

Դաւիթ հարցրեց. «Ի՞ն դու ընչը ես էկէ, առանձին էս օթախը շիկէ մըշին նստի»:

«Ես, ասում է Կապուտկողայ եմ, մէ իշխան մարդի ախշիկ եմ. իմ հայրս էլ կռքապաշտ ա, ընծի ուզում ա տայ հռապաշտի թագաւորի տղին, ես չեմ ուզում կռապաշտութիւն անելլը, ես ուզում եմ քըրիստոնեայ գտանալ և Ռատուած ճանաչել, ընդու հրմար էլ ես էկեր եմ էս օթախի մէշը. էնքան ուժ ունիմ ընձի, որ յեն կարողանում ընծի ախտին, որ տանեննա»:

Դաւիթն ասաւ. «Դաս մի առաւտունը մեր ոյժը փորձմնք»:

Սասաւ. «Ես էդ գործի հը՝ար պատրաստ եմ»:

Նփօր հաց կերան, պատկան քնան, առաւտունը որ լուսը բացուաւ՝ արարի գեստ²⁾ ունէր ախշիկանը, որ հագնում էր՝ ըլլում էր տղամարդի նման: Ախշիկն իրա մինը քաշեց դուս էդ արարի գիստը հագաւ. իր գուրզ, նեսու անեղը վէ կալաւ, իր մինը հնծաւ ու մէցդնին կայնաւ: Խոտպ, Դաւիթն էլ իր մինը հնծաւ, իրա ասպարն վէ կալաւ, մինչև իրիկուն իրար զիւզ անեղ, նետ զշեցին, մէկ մէկու չկարցան աղթեր ին, էկան ձիւց իջան: Դաւիթ էնպէստ հասկըցաւ, թէ իրանց ջընախին ա, ազնանց ջինս ա:

Քնան. առաւտուն էլան. մինչև ի ճաշ կռուան, էլի չը կարցան մէկ-մէկու աղթեր ին:

Դաւիթն ասաւ. «Ծխչի, էսենց լիլի, իջի ձիանքը թողնենք, զիւլաշ կպնենք, միանքը մերք ին»:

1) էարց ու փորձ արին: 2) Ջդեստ:

Եփօր գիւլաշ կողան, շատ չարջարուեցին, Թաւիթին ախոչիան տուեց դիսին.

«Ի՞ն. ասաւ, տղայ. ես էնպիստ ի արէ իմ ջանին, որ պէտք ես բրիստոնէ առեր ի. մէկ էլ, և նէջ մարդ որ ախտէր՝ ընդուր առեր ի. քանի բանի վահուաններու խեռ փարձուեր ի ընձի ախտող չէր էլէ: Հըմի, որ ինը բրիստոնեայ, ընձի էլ ախտեցիր, ես ողտի քեզի առնիմ»:

Թաւիթին ասաւ. «Ել, ընձի մուրազ տե՛մ մինչի իմ մուրազը ըս կատար' մ. քեզի իմ առնիմ»:

Ասաւ. «Ճաներծ, որ մուրազն Խանդոթ-Խաթունն ա. ես արարի դիսոր հազնիմ, մին հեծնիմ. որ իսիս դամ էլթանը պերինը, ինձ էլ խետն առ գեւ, (չունըի էլն ժամանակը Մովսէսի ժամանակին էր, որ բրիստոնեաց էր և իրաւոննը կա: Էրեք-չորս կնմի առնեյ):

Ասաւ. «Չի. ես չեմ ընդունի որ դաս. ժամանակին կ'առեն թէ ես կնացի պերեցյ. կնան Խանդոթ-Խաթունին պերեմ, կամ քեզի էլ իմ խիս տանիմ»:

Ավաշիկն ասում ա «Չունըի որ էդպէս՝ էս օր էլ մի կնա. էկուց էն թագասորը պէտք է դօշուն կապի կայ, որ ընձի գոտով առնի էլթայ. ես զինամ, որ դու ոկի դօշուն արած չ'ունիս, ջահիկս անս մը ես էն դօշունի զրօխը ինչ օցին կը խանեմ»:

«Ինան առ աւուոր մի: Կացան: Խաւապաշտի դօշունը էնպիստ էր էղ ախտիաց ամարամի բոյորը փակէ. որ քարին, թփին հէսոար կայ, դօշունին ըլ կայ. Սիսչ ի ին էրաւ իր արարի զեսոր հազար, իր մինը հնամ»:

Թաւիթին ասաւ. «Կարան դօշունը առւ չես կարաչ ջարդի, թող ես էլ իմ ձինը հեծնիմ»:

Ասաւ. «Դէ տու կայնի թամաշաց արա, տես ես դօշունի կրօխն ինչ օցին կը հանիմ»:

Մինչև ի ճաշ ախւիկը կոխւ արաւ. էդ դօշունը էնպիստ կոտորեց. էնպէստ սըսպանեց, որ թագաւորը մէ չորս միաւորում անջախ փալսու պըճաւ:

Ասաւ. «Թաւիթ, տեսնո. մ ես էս դօշունի զրօխն ինչ օցին հանեցի, գնա, դշշաղ մնացի, մի փախեցի լմու զէօրաչ նամուս արա, յը սըրանու՝ սա:

Թաւիթին իր մինը քշեց դուս, հեծաւ իր մինը. ախշիկը նորից մէկը իր ուայմանը հաստատեց, թէ. «Տես, իմ մեռնիցը դու վնաս կը քաշիս, եթէ դառնալու ընձի չ'տանիմ»:

Էլաւ. իր մինը ու քշեց կնաց. մէկ օր, էրիու օր. գնաց ամեն մարդուց հարցնում էր, թէ Կար հրն աւ նշանց տուեցին, թէ էնի Կարն է: Կնաց անսաւ, որ մէ զիզգեահ տեղ էլ մէ զութան

պանում է. ինքն էլ մին էլ էր սոված. «Լաւ, ասաւ, էսի գութան ա, գութան օրանց Առջու օրին սծ ա. էթամ ըստեղ հաց կըլի, կուտեմ մի քիչ, մինու և լ կարածայ. Վէսայ Ղաթը, կ'էլլեմ կեթամ: «Կնաց էդ գութանսորին բարեւ տուեց, էդ մարդիկն էլ ուր բարեն առան:

Թթէ. «Ե՛սպէր ջան, սիի հաց ունիբու:

Թթէ. Զիուց վեր արի մինդ թող արածի, գուն էլ մի քիչ հանգատացի. Հրմի մեր հացը սէլով կը պերին:

Զիուց իրու՝ ձինը բրաքեց բանեց արածայ, ասաւ. «Ե՛յ, մարդիկ, էդ գութանը բը մեղ ը են. հովին վար արէ բ, չոքին խի՞ է.ք ջարթում:

Թթէ. «Ոկնակոս ա ըլէ, քիչ ա մուում, առ նենք, նոր կը թողնք տաւարը:

«Ե՛յ, ասաւ, էդ անասունները մեղք են, թողէքս:

«Ե՛յ, արայ, Առջու սիրուն, թող էդ թիրէն վարենք արտատիրը կնելանայ:

Դաւիթը զուազ թողի տուեց տաւարը: Ասաւ. «Էդ գութանի պնատէն, լըները պըրծըցիէ.ք զարդ դրէ.ք. (Խարզանը¹⁾) դրեց ուսին, մաճիսցին առաւ, զու մաճը սըրնի (ասաւ), ես հրմի կը վարեմ կը պըճնեմա: Ֆինը մենակ էդ գութանը տանըմ պերում է.ք. յումի հացի կազը վարեյ պըճաւ:

Հաց պերողները տեսան որ էդ մարդը մենակ գութանը դրէ ուսին վարըմ ա. զարմացան էդ մարդի ուժի վլրէն. «Կորիճ, արի նոսու հաց կէ, ասեցին: Սիսոր մարդի խորակի ին պերած, էկա օխտը մարդի հացը, խորակը կերաւ, էկաւ լը մինը հեծաւ, ասաւ մընացէք պարի, ես էթըն եմ:

Էդ մարդիկն ասեցին. «Հարալ ը.ի էդ մարդի կերած-խեմածը, թէ զըւաթը թէ ուտելը հապալ ա. ոյ առաւմ ին Սասուն էս թաւուր աղնանց ջընսից էս թաւուր աղամարդիկ կան՝ յենք հաւատում. աշբով ահսանք ու հաւատացինք:

Քշից կնաց Ղաթ. էն մարդի ախովիկն ինչ ուզեր էր՝ ընդուր զւան իջաւ, էս մարդիկը տեսան, որ էսի Դաւիթն ա, իրանց խօսք տուած մարդն ա: Դաւիթին տարան ներս: Հաց. խորակ պերեցին՝ կերաւ, խմեց: Էդ մարդը Դաւիթիցը թաքուն մէ մարդ ճամբեց Մըսիր Մեծիքի կուշար, թէ. Ժնչ ես անըմ, Դաւիթն էկէ իմ ախշիկը տանէ. հունար ունիս, տեսա: Դաւիթն էլ սասառում ա էդ մարդին, թէ ախշիանդ մեռը սոր տես, որ առաւուց պըտի էթամ: Էդ մարդը

¹⁾ Դաւիթանի այն երկար վայտը, որի վրայ ամէ ացած է յինում խոփը, և որի ծայրին ամբացնում են լուծը. Այբարատեան նահանգում կոչւում է «զաթանի լը»:

Դաւըթից հինգ օր ժամանակ ուզեց որ բայքի թադաւոր գայ հասնի. հինգ օրը թամմաւ, Մուա-Մելիքը չէկա հասաւ.

Դաւիթն ասաւ. եղ էլ քո պայմանը. հինգ օրը թըմմաւ. դէ իմ կնիկը տու, ես պըտի էթամա:

Եղ մարդը լը կրցաւ լիլաջ տեսնէր էլաւ ախշիայ ձեռք-ուոր տեսաւ, մի ձիռ վրայ դրեց, տուաւ էդ մարդին, թէ առ կնա, եդ էլ քո կնիկը:

Էլան քաղաքը ցը: Որ մէկ օրուան ճամբայ զատըցան, ախշին իմանում էր, որ Մորա-Մելիքը պըտի գայ. ասաւ «Նրի իրնենք քիան-քուց. մէկ օր մենք էլ, միանքն էլ դինչնան, կելլինք կ'լթանք»:

Եփօր միանքուցը իշան, Դաւիթը միանքուցը բրախից¹⁾ արածան, ին քն էլ զիսխը դրեց Խանդութ-Խամբունի յոքի վրէն ու քնաւ: Քնելլ շատր-քիլը Շատուած զինայ մէկ էլ օնամիշ էլաւ տեսաւ որ հը, զօշունը Հասրէհաւ ա²⁾: Էլաւ ասաւ. «Խանդութ-Խանում, լը վախմնաս բառոնք ինձի հրմար ին էկած, որ որպանին քեզի առնեն տանենն. դու առ քո մինը, զօշունից դրադ կայնի, չը խառնուիս, վայ թէ վախմնաս»:

Հեծաւ Քուռի-Ջալադն ու զանցեց իրա Սատուածը, գնաց զօշունի աթաքին³⁾ կայնաւ, Ակսեց «Եթենեալ բարեւար» ասել. Օ՛րն-նեալ Բարերար, կամքն օրհնեալ, էն Արարոդին. զանչնենք սարերու սրբեր. մորերու կոչս Մայր Սատուածածին օգնական պահապան ըլիս էս Դաւըթին»: Քաշեց իր կէ ծկրտէն թուրը ու ընկաւ. Մորա-Մելիքի մէջը. զօշունը էնպէս ջարդեց, որ անջաս Մորա-Մելիքը մէ հինգ մարդով փախաւ, արծաւ Դաւըթի ճենից: Աէ կալաւ իր Խանդութ-Խամբունն ու էկաւ էկաւ Սասունայ մօտըցաւ. էթող-գալոր խարար տարաւ, թէ Դաւիթը Խանդութ-Խամբունն առաւ սաղ-սաղամաթ գալում աս

Քեռի-Թորսաը մէ քանի Սասունայ լաւ. մարդը կեցը էլան էկան Դաւըթի դէմ: Էկան բարեւցին Դաւըթի խետս: Իր զլիսի գայած Դաւիթ պատմեց բառոնցը: Էկան էկան, ախշիայ ամարութն անցան, Դաւիթը սկի ցրինաց յախսուզ⁴⁾ տրբայ ախշիայ անարաթը: Աղյիկն է զամթի Դաւըթի ճամբէն պահը էր: Ախշիկը տեսաւ, որ հէսաւ Դաւիթը Խանդութ-Խամբունն առաւ էկաւ դնաց, չը տարաւ իրան: Իդ ախշիկը տեսաւ, որ Դաւիթը պայմանագանց էկաւ իր պայման, ցը՝ էլաւ իր մինը հեծաւ, յառաջ-յառաջ էկաւ էդ ճապադրի դրադ (Դաւիթը ըստով պըտի ընցնէր): Էկաւ ախշիկը իր մինը բրախից ու ինքը մտաւ էդ դամշէ⁵⁾ մէջ: Որ Դաւիթն էկաւ էդ ջուրն հընցան՝ «Դէ, ասաւ,

1) Բաց թողեց: 2) Մուեցել է: 3) Մէկ ծայրին: 4) Դիսմայր: 5) Եղեգնուաւ:

Քեռի-Թորոս, մէ էրկու ամիս ա չեմ լողացէ՝ զու առէք հարսը կնացէք, ասաւ. ես մի բատեղ լըդանամ, կը գամ հասնի մա.

Յինը բբախեց ըտեղ ու մոտաւ ըտեղ լողանայ, Ախշիկն էն դամըջին մըջին նիս ու անեղը է, նպէստ զարաւութեց, որ Դաւթիթի սրտի մըջին տալուն պէս Դաւթիթը փռուաւ ջրի իրեսին։ Ախշիկը դամշի մըջից Դաւթին դր նեց դրեց զրայ։
«Ենաստուած, դու ընցի ընձի անտեղի սպանեցիր»։

Շատ ևս քո խնտ պայման արեցի, որ ընձի չը տանես՝ վնաս կը գայ քեզի. վնասն ես ա։ Դէ, բեր քո եարէքը¹⁾ քանի տաք ա, կապեմ, որ կնա հասի. դու կը մեռնես, ես էլ մեր ցեղիցն եմ. ես լայտի իմ մէրը քո պապի հետ սրողութին ա արէ, ես քո պապիցն եմ։ Պերէց եարէ բը փաթթեց ու Դաւթին դրեց ձիւ վրէն։

Դաւթիթը ձինը բշեց գնաց հատաւ Քեռի-Թորոսին։ Գնացին հասան քաղաքը, մէ հինգ օրուանը ետ Դաւթիթը մեռաւ էդ եարիցը։

Յինքը որ մեռաւ, կնիկն էրեխով էր պառկաւ մէ տղայ պերց. կնրեցին, անունը զընցին Մներ, Մեծ Մներ։

Մեծ Մներիցն ըլլում է Թոլ—Դաւթիր։

Սրանից ըլլում է Պղտի Մներ։

1) Վերքեր։